



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

''28'' օգոստոսի 2013 թ.

թիվ 31-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ  
ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Գյուղատնտեսական համատարած հաշվառման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.

Հաստատել՝

1. ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում «Կազմակերպական պլանների կազմման կարգը» համաձայն հավելված 1-ի
2. Ձև 1 Կ՝ «Քաղաքների հրահանգչական տեղամասի հաշվային տեղամասերի կազմը» ձևաթուղթը՝ համաձայն հավելված 2-ի,
3. Ձև 2 Կ՝ «Քաղաքների հաշվառման տեղամասի հրահանգչական տեղամասերի կազմը»՝ ձևաթուղթը՝ համաձայն հավելված 3-ի,
4. Ձև 3 Կ՝ «Քաղաքների հաշվառման շրջանացում»՝ ձևաթուղթը՝ համաձայն հավելված 4-ի,
5. Ձև 4 Կ՝ «Գյուղերի հրահանգչական տեղամասի հաշվային տեղամասերի կազմը» ձևաթուղթը՝ համաձայն հավելված 5-ի,
6. Ձև 5 Կ՝ «Գյուղերի հաշվառման տեղամասի հրահանգչական և հաշվային տեղամասերի կազմը» ձևաթուղթը՝ համաձայն հավելված 6-ի,
7. Ձև 6 Կ՝ «Գյուղերի հաշվառման շրջանացում» ձևաթուղթը՝ համաձայն հավելված 7-ի,
8. Ձև 7 Կ՝ «Միասնական (քաղաքների և գյուղերի) հրահանգչական տեղամասի հաշվային տեղամասերի կազմը» ձևաթուղթը՝ համաձայն հավելված 8-ի,
9. Ձև 8 Կ՝ «Միասնական (քաղաքների և գյուղերի) հաշվառման տեղամասի հրահանգչական և հաշվային տեղամասերի կազմը» ձևաթուղթը՝ համաձայն հավելված 9-ի,
10. Ձև 9 Կ՝ «Ցուցակ խմբային տնտեսությունների (քրեակատարողական հիմնարկներ, զորամասեր, մանկապարտեզներ, ծերերի և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, ուսումնական հաստատություններ, գիտա-փորձարարական

ստորաբաժանումներ) և առևտրային կազմակերպությունների» ձևաթուղթը՝ համաձայն հավելված 10-ի,

11. Ձև 10 Կ՝ «Հաշվառման կադրերի պահանջարկ» ձևաթուղթը՝ համաձայն հավելված 11-ի,
12. Ձև 11 Կ՝ «Տեղեկանք հաշվառման կադրերի ուսուցման (հրահանգավորման» ձևաթուղթը՝ համաձայն հավելված 12-ի,
13. Ձև 12 Կ՝ «Տեղեկանք բնակչության շրջանում զանգվածային-բացատրական աշխատանքների կազմակերպման» ձևաթուղթը՝ համաձայն հավելված 13-ի:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

**Հավելված 1**

Հայաստանի Հանրապետության  
վիճակագրության պետական խորհրդի  
2013 թվականի օգոստոսի 28 -ի թիվ 31-Ա որոշման

**ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական  
համատարած հաշվառում**

**Կ Ա Ր Գ**

**ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ  
ԿԱԶՄՄԱՆ**

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման (այսուհետ՝ **փորձնական ԳՀՀ**) նախապատրաստական աշխատանքների շրջանակում համայնքի տնտեսությունների ցուցակների (**Ձև թիվ 1 - Աղյուսակ 1, Ձև թիվ 2 գյուղական - Աղյուսակ 2**), համայնքների սխեմատիկ հատակագծերի, ինչպես նաև փորձնական ԳՀՀ աշխատանքներն իրականացնելու համար ժամանակավոր ներգրավված աշխատողների համար սահմանված աշխատանքային ծանրաբեռնվածության հիման վրա կազմվում են հաշվառման նախապատրաստման և անցկացման **կազմակերպական պլանները**:

2. Փորձնական ԳՀՀ ճիշտ կազմակերպելու և ընտրված տարածքում հաշվառման ամբողջականությունն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) Արարատի, Կոտայքի և Տավուշի մարզային գործակալությունները իրենց համապատասխան տարածքային ստորաբաժանումների հետ կազմում են փորձնական ԳՀՀ անցկացնելու **կազմակերպական պլաններ** (այսուհետ՝ **կազմապլան**):

3. Փորձնական ԳՀՀ անցկացնելու **կազմապլանը** բաղկացած է հետևյալ 5 բաժիններից՝

1) Հաշվառման շրջանացում.

2) Խմբային տնտեսությունների և առևտրային կազմակերպությունների ցուցակների կազմում.

3) Հաշվառման կադրերի պահանջարկի հաշվարկ.

4) Հաշվառման կադրերի ուսուցման (հրահանգավորման) և նրանց պատրաստվածության ստուգման իրականացում.

5) Բնակչության շրջանում զանգվածային-բացատրական աշխատանքների կազմակերպում:

4. Կազմապլանի հետ մեկտեղ լրացվում է նաև **ամփոփագիր**, որտեղ ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձանց կողմից պարզաբանումներ են տրվում հաշվառման նախապատրաստական աշխատանքների կատարման, մարզում (տարածաշրջանում) հաշվառման շրջանացման առանձնահատկությունների մասին: Անհրաժեշտության դեպքում, հիմնավորում է տրվում հաշվառման անձնակազմի ծանրաբեռնվածության սահմանված նորմաները խախտելու վերաբերյալ:

Ամփոփագրում նշվում է նաև նախատեսվող հաշվառման կադրերի ներգրավման հիմնական աղբյուրները (ուսուցիչներ, ուսանողներ, չաշխատող անձինք և այլն):

**5. Սույն ցուցումներում օգտագործված հասկացությունները կիրառվում են միայն վիճակագրական նպատակներով:**

**ԲԱԺԻՆ I Հաշվառման շրջանացում**

1. Փորձնական ԳՀՀ անցկացնելու **կազմալանի** հիմնական գործընթացը **հաշվառման շրջանացումն է**, այսինքն՝ ընտրված տարածքների բաժանումը կազմակերպման առումով ավելի մատչելի և կառավարելի տեղամասերի՝ հաշվային, հրահանգչական և հաշվառման տեղամասերի:

2. Տվյալ տարածքի սահմանազատումը հաշվային, հրահանգչական և հաշվառման տեղամասերի հնարավորություն կտա ապահովելու փորձնական ԳՀՀ ընթացքում Արարատի, Կոտայքի և Տավուշի մարզերի ընտրված համայնքներում տնտեսությունների ամբողջական ընդգրկումը և կբացառի դրանց կրկնակի հաշվառումը: Հաշվառման շրջանացումն անհրաժեշտ է նաև ժամանակավոր ներգրավվող աշխատողների պահանջարկը որոշելու և նրանց ըստ տեղամասերի ճիշտ բաշխելու համար:

3. Յուրաքանչյուր տարածաշրջանի կամ քաղաքի տարածքի բաժանումը հաշվառման, հրահանգչական և հաշվային տեղամասերի պետք է կատարվի համայնքների տնտեսությունների ցուցակների (**Ձև թիվ 1 - Աղյուսակ 1, Ձև թիվ 2 գյուղական - Աղյուսակ 2**), համայնքի սխեմատիկ հատակագծի ու տարածաշրջանի քարտեզների հիման վրա:

4. Հաշվառման շրջանացման արդյունքներն անցկացվում են համայնքի սխեմատիկ հատակագծի և տարածաշրջանի քարտեզի վրա:

5. Հաշվառման շրջանացումն իրականացվում է ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների պետերի կողմից՝ վիճակագրության համապատասխան տարածքային ստորաբաժանման պատասխանատու անձի, հաշվառման անցկացման ընթացքում մարզերում հաշվառման աշխատանքները համակարգողների անմիջական մասնակցությամբ:

6. Սկզբում որոշվում են **հաշվառման տեղամասերի** տարածքներն ու սահմանները: Փորձնական ԳՀՀ ժամանակ ընտրված 3 մարզերում ստեղծվելու են հաշվառման 5 տեղամասեր:

Այնուհետև, **հաշվառման տեղամասերը** պետք է բաժանել **հաշվային տեղամասերի**, իսկ հաշվային տեղամասերը միավորել **հրահանգչական տեղամասերի** մեջ:

7. Հաշվային տեղամասերը համարակալվում են հրահանգչական տեղամասի սահմաններում, հրահանգչական տեղամասերը՝ հաշվառման տեղամասերի սահմաններում, հաշվառման տեղամասերը՝ տարածաշրջանի/քաղաքի սահմաններում:

8. Հաշվառման շրջանացման արդյունքները գրառվում են կազմալանի **Ձև 1 Կ – Ձև 8 Կ** ձևաթղթերում:

9. Հաշվառման, հրահանգչական և հաշվային տեղամասերի ընդհանուր քանակները յուրաքանչյուր մարզի և տարածաշրջանի համար սահմանվում է ՀՀ ԱՎԾ կողմից, իսկ մարզերում դրանք բաշխվում են հաշվառման, հրահանգչական և հաշվային տեղամասերի համար նախապես սահմանված աշխատանքային նորմաների հիման վրա:

### ***Քաղաքների հաշվառման շրջանացում***

10. Քաղաքի կտրվածքով հաշվարարների, հրահանգիչ-հսկիչների աշխատանքային միջին նորմաները (ծանրաբեռնվածությունը) ցանկալի է պահպանել նույնը, սակայն անհրաժեշտության դեպքում՝ կախված քաղաքի կառուցապատման խտությունից, հնարավոր է, որ դրանք քաղաքի տարբեր հատվածներում տարբերվեն: Ծանրաբեռնվածության միջին նորման պետք է բարձրացնել այն հատվածներում, որտեղ գերակշռում են կանոնավոր դասավորված տները և իջեցնել այն հատվածներում, որտեղ գերակշռում է մեծ տարածքի վրա տների բաշխվածությունը:

11. Հաշվային տեղամասը կարող է բաղկացած լինել՝

- մեկ ցուցակագրման թաղամասից (զանգվածներից),
- մեկ ցուցակագրման թաղամասից և նրան սահմանակից մյուս թաղամասից կամ դրա մի մասից,
- մի քանի սահմանակից թաղամասերից (զանգվածներից):

12. Քաղաքի հաշվային տեղամասերում տնտեսությունների քանակը միջին հաշվով պետք է լինի 100 և չպետք է գերազանցի 120-ը: Հաշվային տեղամասերը պետք է բաղկացած լինեն ամբողջական թաղամասերից (զանգվածներից): **Չի թույլատրվում** թաղամասերը (զանգվածները) բաժանել հաշվային տարբեր տեղամասերի:

13. **Չի թույլատրվում բաժանել** այն թաղամասը (զանգվածը), որտեղ տնտեսությունների քանակը չի գերազանցում հաշվարարի առավելագույն (120 տնտեսություն) ծանրաբեռնվածությունը:

Տարբեր թաղամասերի (զանգվածներից) առանձին մասերից մեկ հաշվային տեղամաս ձևավորել **չի թույլատրվում**: Հաշվային տեղամասերն ըստ փողոցների կազմավորվում են միայն այն քաղաքներում, բնակավայրերում կամ քաղաքների հատվածներում, որոնք բաղկացած են մեկ փողոցից կամ մի քանի զուգահեռ փողոցներից, և այդ պատճառով տնտեսությունների ցուցակները՝ **Ձև թիվ 1**, նույնպես կազմվել են ըստ փողոցների:

14. Հաշվային տեղամասերը միավորվում են **հրահանգչական տեղամասերի** մեջ, որոնցում, որպես կանոն, ներառվում են ամբողջությամբ մեկ կամ մի քանի սահմանակից թաղամասեր (զանգվածներ): **Չի թույլատրվում** մեկ հրահանգչական տեղամասի մեջ միավորել տարբեր

թաղամասերի (զանգվածների) մասեր: Խորհուրդ չի տրվում տարբեր տեղամասերի բաժանել այն թաղամասերը (զանգվածները), որոնցում տնտեսությունների քանակը չի գերազանցում հաշվարարի առավելագույն ծանրաբեռնվածությունը: Նախատեսվում է մեկ հրահանգչական տեղամաս ձևավորել միջինը 5, իսկ առավելագույնը՝ 6 հաշվային տեղամասերից: Չի թույլատրվում մեկ հրահանգչական տեղամասի մեջ երկաթուղով կամ գետով մեկը մյուսից բաժանված թաղամասեր (զանգվածներ) ներառել:

15. Եթե քաղաքային համայնքն իր ենթակայության տակ ունի գյուղ(եր), ապա դրանցում, կախված տնտեսությունների քանակից, ստեղծվում են հրահանգչական և հաշվային տեղամասեր, որոնք մտնում են տվյալ քաղաքի հաշվառման տեղամասի կազմի մեջ: Մեկ հաշվային տեղամասի մեջ քաղաքի և գյուղական բնակավայրի տնտեսություններ միավորել **չի թույլատրվում**:

16. Քաղաքի հաշվառման շրջանացման արդյունքները գրառվում են կազմալանի **Ձև 1 Կ - Ձև 3 Կ** ձևաթղթերում: Հաշվառման շրջանացման արդյունքներն անցկացվում են քաղաքի սխեմատիկ հատակագծի վրա: Հատակագծի վրա տարբեր գույներով պայմանանշվում են հաշվառման, հրահանգչական և հաշվային տեղամասերի սահմանները: Սխեմատիկ հատակագծի վրա յուրաքանչյուր հաշվային տեղամասի համար գրառվում են տվյալ հաշվային տեղամասի համարը և դրանում տնտեսությունների քանակը, օրինակ՝ երեք / հարյուր քսան (3/120, նշանակում է 3-րդ հաշվային տեղամասում ներառված են 120 տնտեսություններ):

### **Գյուղերի հաշվառման շրջանացում**

17. Գյուղերի հաշվառման տեղամասը պետք է ներառի միայն ամբողջական գյուղական համայնքներ:

18. Առանձին հաշվային տեղամասերի է բաժանվում այն գյուղական բնակավայրը կամ գյուղական համայնքը, որում տնտեսությունների քանակը գերազանցում է հաշվարարի առավելագույն աշխատանքային նորման (120 տնտեսություն): Հաշվային տեղամասը կարող է բաղկացած լինել՝

- բնակավայրի մի մասից,
- ամբողջ բնակավայրից,
- մի քանի բնակավայրերից,
- մեկ բնակավայրից և մոտակա բնակավայրի մի մասից:

19. Տարբեր գյուղական համայնքների կամ բնակավայրերի մասերից հաշվային տեղամասեր կազմավորել **չի թույլատրվում**:

20. Հաշվային տեղամասերը միավորվում են հրահանգչական տեղամասի մեջ, որն ընդգրկում է մեկ կամ մի քանի հարակից համայնքներ: Եթե գյուղական համայնքի հաշվային տեղամասերի քանակը չի գերազանցում

հրահանգիչ-հսկիչի առավելագույն ծանրաբեռնվածությունը (մեկ հրահանգչական տեղամասում միջինը 5 հաշվային տեղամասեր, իսկ առավելագույնը՝ 6), ապա այդպիսի բնակավայրում կազմավորվում է մեկ հրահանգչական տեղամաս:

21. Գյուղերի հաշվառման շրջանացման արդյունքները լրացվում են կազմականի **Ձև 4 Կ - Ձև 6 Կ** ձևաթղթերում:

22. Քաղաքային համայնքի կազմում առկա գյուղ(եր)ում կազմավորված հրահանգչական կամ հաշվային տեղամասերի համար կազմվում են **Ձև 4 Կ և Ձև 5 Կ** ձևաթղթերը:

23. Հաշվառման շրջանացման արդյունքներն անցկացվում են տարածաշրջանի քարտեզի վրա: Քարտեզի վրա տարբեր գույներով պայմանանշվում են հաշվառման, հրահանգչական և հաշվային տեղամասերի սահմանները՝ նշելով դրանց համարներն ու տնտեսությունների քանակը:

### ***Միասնական (քաղաքների և գյուղերի) հրահանգչական և հաշվառման տեղամասերի ձևավորումը***

24. Առանձին դեպքերում թույլատրվում է ձևավորել հաշվառման և հրահանգչական միասնական տեղամասեր, այսինքն՝ քաղաքի հաշվառման (հրահանգչական) տեղամասի կազմում ներառել գյուղի հրահանգչական (հաշվային) տեղամասեր և հակառակը: Միասնական (քաղաքների և գյուղերի) հաշվառման և հրահանգչական տեղամասեր ստեղծվում են այն դեպքում, երբ այդ տեղամասերը գտնվում են գյուղերի (քաղաքի) հաշվառման տեղամասի կենտրոնից զգալի հեռավորության վրա և ավելի մոտ են գտնվում քաղաքին (գյուղին), կամ առկա են ոչ մեծ քաղաքներ, որոնցում առանձին հաշվառման տեղամասեր չեն կազմավորվում: **Արգելվում է քաղաքային և գյուղական բնակավայրերի տնտեսությունները միավորել մեկ հաշվային տեղամասում:**

25. Քաղաքի հաշվառման տեղամասի կազմի մեջ ներառված գյուղական հրահանգչական կամ հաշվային տեղամասերի, ինչպես նաև գյուղերի հաշվառման տեղամասի կազմի մեջ ներառված քաղաքային հրահանգչական կամ հաշվային տեղամասերի համար կազմվում են նաև **Ձև 7 Կ և Ձև 8 Կ ձևաթղթերը:**

26. Միասնական (քաղաքների և գյուղերի) հրահանգչական տեղամասերի համար կազմված հաշվառման շրջանացման բոլոր ձևերը կցվում են այն հաշվառման տեղամասի նյութերին, որի կազմի մեջ դրանք ներառված են:



## **Բաժին II. Խմբային տնտեսությունների և առևտրային կազմակերպությունների ցուցակների կազմում**

1. Տվյալ տարածաշրջանում գտնվող **խմբային տնտեսությունների** (քրեակատարողական հիմնարկների, զորամասերի, մանկատների, ծերերի և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, գիտա-փորձարարական ստորաբաժանումների) **և առևտրային կազմակերպությունների** վերաբերյալ տեղեկությունները լրացվում են կազմալանի **Ձև 9 Կ** ձևաթղթում՝ ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատուների կողմից:

2. Սկզբում լրացվում են տվյալ տարածաշրջանի քաղաքներում գտնվող նշված կազմակերպությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը, իսկ այնուհետև՝ գյուղերինը:

\*

\* \* \*

*Կազմալանով ներառված տնտեսությունների ընդհանուր քանակը համեմատվում է տնտեսությունների ցուցակների, գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղիների ցուցակների հիման վրա կազմված ամփոփագրերի հանրագումարների հետ: Տնտեսությունների ցուցակների, գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղիների ցուցակների ստուգումից հետո, եթե նկատվել են անհամապատասխանություններ, կազմալանի ձևաթղթերում և քարտեզագրական նյութերում անհարժեշտ է կատարել համապատասխան ճշգրտումներ և փոփոխություններ:*

## **ԲԱԺԻՆ III Հաշվառման կադրերի պահանջարկի հաշվարկ**

1. ՀՀ մարզերում (տարածաշրջաններում) հաշվառման ժամանակավոր աշխատողներ են հանդիսանում՝ ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններում հաշվառման աշխատանքները համակարգողները, հաշվառման տեղամասերի վարիչները, հաշվառման տեղամասերի վարիչների օգնականները, հրահանգիչ-հսկիչները և հաշվարարները:

2. Փորձնական ԳՀՀ անցկացման աշխատանքներում նպատակահարմար է ներգրավել այն անձանց, ովքեր կարող են ապահովել հաշվառման անհրաժեշտ նախապատրաստումն ու հաջող անցկացումը: Հաշվառման կադրերը հավաքագրվում են ուսուցիչներից, ուսանողներից, չաշխատող անձանցից և այլն: Նպատակահարմար է առավելություն տալ

սոցիալական դիտարկումների և հետազոտությունների անցկացման փորձ ունեցող անձանց:

3. Գյուղական համայնքներում ցանկալի է հաշվարարներին և հրահանգիչ-հսկիչներին հավաքագրել տվյալ կամ հարևան գյուղի բնակիչներից:

4. Հաշվառման կադրերի հավաքագրումը կատարվում է հետևյալ ժամկետներում.

1) ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Արարատի, Կոտայքի և Տավուշի մարզային գործակալությունների հաշվառման աշխատանքները համակարգողներ՝ **2013 թվականի հոկտեմբերին,**

2) հաշվառման տեղամասերի վարիչներ և նրանց օգնականներ՝ **2013 թվականի հոկտեմբերին,**

3) հրահանգիչ-հսկիչներ՝ **2013 թվականի հոկտեմբերին,**

4) հաշվարարներ՝ **2013 թվականի նոյեմբերին:**

5. Հաշվառման կադրերի ընդհանուր թվաքանակը որոշվում է հաշվային, հրահանգչական և հաշվառման տեղամասերի քանակից և հաշվարարների ռեզերվից, որը պետք է կազմի հաշվարարների հիմնական անձնակազմի հինգ տոկոսը:

6. Հաշվառման ժամանակ վճարվող ռեզերվային հաշվարարները պետք է հերթապահեն հաշվառման, հրահանգչական տեղամասերում կամ ՀՀ ԱՎԾ տարածքային բաժիններում և կատարեն իրենց հանձնարարված աշխատանքները: Հաշվարարներից որևէ մեկի բացակայության դեպքում անհրաժեշտ է նրան փոխարինել ռեզերվային հաշվարարով:

7. Հաշվառման կադրերի պահանջարկի վերաբերյալ տեղեկությունները գրառվում են կազմալանի **Ձև 10 Կ** ձևաթղթում:

8. Ընտրված կադրերը հաշվառման աշխատանքներում ներգրավվում են հետևյալ ժամկետներով.

1) ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Արարատի, Կոտայքի և Տավուշի մարզային գործակալություններում հաշվառման գործերը համակարգողներ՝ 4 ամիս ժամկետով,

2) հաշվառման տեղամասերի վարիչներ և նրանց օգնականներ՝ 2.5 ամիս ժամկետով,

3) հրահանգիչ-հսկիչներ՝ 2 ամիս ժամկետով,

4) հաշվարարներ՝ 1 ամիս ժամկետով:

## **ԲԱԺԻՆ IV Հաշվառման կադրերի ուսուցում (հրահանգավորման) և նրանց պատրաստվածության ստուգում**

1. ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Արարատի, Կոտայքի և Տավուշի մարզային գործակալությունների ղեկավարների, համապատասխան տարածքային ստորաբաժանումների պատասխանատու անձանց, ինչպես նաև վերոնշյալ պաշտոնատար անձանց փորձնական ԳՀՀ ընթացքում հաշվառման աշխատանքները համակարգողների, հաշվառման տեղամասերի վարիչների և նրանց օգնականների **հաշվառման հարցերով ուսուցումն անցկացվում է ՀՀ ԱՎԾ կողմից**: Հրահանգիչ-հսկիչների ուսուցումն անցկացվում է մարզային գործակալության ղեկավարների կողմից, հաշվարարներինը՝ հաշվառման տեղամասերի վարիչների և նրանց օգնականների կողմից՝ համապատասխան տեղամասերի հրահանգիչ-հսկիչների մասնակցությամբ: Հիմնական անձնակազմի հետ ուսուցմանը ներգրավվում է նաև վճարվող ռեզերվը:

2. Հաշվառման կադրերի ուսուցման ընթացքում պարտադիր կերպով կատարվում է **հաշվառման հարցաթերթի փորձնական լրացում**, որից հետո իրականացվում է կադրերի պատրաստվածության ստուգում:

3. Հաշվառման փաստաթղթերի լրացման կարգը չյուրացրած անձանց չի թույլատրվում մասնակցել հաշվառման անցկացման աշխատանքներին, նրանց պետք է փոխարինել կամ վերապատրաստել:

4. Հաշվառման կադրերի ուսուցման վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է կազմալանի **Ձև 11 Կ** ձևաթղթում:

## **ԲԱԺԻՆ V Բնակչության շրջանում զանգվածային - բացատրական աշխատանքների կազմակերպում**

1. Փորձնական ԳՀՀ անցկացումը պահանջում է բնակչության և գործարարության շրջանում լայն բացատրական աշխատանք՝ հաշվառման նպատակների, խնդիրների, անցկացման կարգի և ժամկետների մասին:

2. Նպատակահարմար է նախատեսել տեղական մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության օգտագործումը՝ հաշվառման նպատակի, դրա ծրագրի և անցկացման կարգի, ինչպես նաև հաշվառման նախապատրաստական աշխատանքների կատարման ընթացքը լուսաբանելու համար: Հարկավոր է նախատեսել նաև գյուղատնտեսական հաշվառման խնդիրների և նպատակների մասին զեկույցների, զրույցների, սեմինարների անցկացում տվյալ տարածաշրջանում գործող կրթական հաստատություններում և այլ

կազմակերպություններում, ինչպես նաև կիրառել զանգվածային-բացատրական աշխատանքների իրականացման հնարավոր այլ ձևեր:

## **Կազմակերպական պլանի ձևաթղթերի (Ձև 1 Կ - Ձև 12 Կ) լրացման կարգը և դրանց փոխկապակցվածությունը**

1. «Քաղաքների հրահանգչական տեղամասի հաշվային տեղամասերի կազմը»՝ **Ձև 1Կ**, լրացվում է քաղաքներում յուրաքանչյուր հրահանգչական տեղամասի համար՝ գրառելով տվյալ հրահանգչական տեղամասում ներառված յուրաքանչյուր հաշվային տեղամասի կազմը:

**Ձև 1 Կ** ձևաթղթում տնտեսությունների գրառումն ըստ ցուցակագրման թաղամասերի, հնարավորության սահմաններում, պետք է համապատասխանեցնել տվյալ թաղամասի (զանգվածի) համար կազմված **Ձև թիվ 1 Աղյուսակ 2 - ում** կատարված գրառմանը:

2. **Ձև 1Կ** ձևաթղթի 7-9-րդ սյունակներում արտագրվում են **Ձև թիվ 1 Աղյուսակ 2-ի** 2-րդ և 9-րդ, 4-7-րդ և 8-րդ սյունակների տվյալները:

3. Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ եթե միևնույն հասցեում բնակվում են մեկից ավելի տնտեսություններ, ապա յուրաքանչյուր տնտեսության վերաբերյալ տվյալները գրվում են առանձին տողով:

4. Մեկ հաշվային տեղամասի վերջին տնտեսության վերաբերյալ տեղեկությունների գրառումից հետո հաշվարկվում է տվյալ հաշվային տեղամասի հանրագումարն՝ ըստ **Ձև 1 Կ** ձևաթղթի համապատասխան սյունակներում պահանջվող տեղեկատվության:

5. **Ձև 1 Կ -ի** 5-րդ սյունակի ընդամենը տողի հանրագումարը աղյուսակի համապատասխան սյունակների տողերով գրառված տների քանակն է, 6-րդ սյունակի ընդամենը տողի հանրագումարը՝ աղյուսակի համապատասխան սյունակի տողերով գրառված տնտեսության գլխավորների թվաքանակն է: 7-րդ սյունակի ընդամենը տողում լրացվում են միայն գյուղատնտեսական նշանակության և/կամ տնամերձ հողեր ունեցող տնտեսությունների ընդամենը քանակը: 8-րդ սյունակի ընդամենը տողում լրացվում են միայն գյուղատնտեսական կենդանիներ ունեցող տնտեսությունների ընդամենը քանակը, իսկ 9-րդ սյունակի ընդամենը տողում՝ գյուղատնտեսական տեխնիկա ունեցող տնտեսությունների ընդամենը քանակը:

6. Տվյալ հրահանգչական տեղամասի բոլոր հաշվային տեղամասերի վերաբերյալ գրառումները կատարելուց հետո, վերջում հաշվարկվում և գրառվում է հրահանգչական տեղամասի հանրագումարը՝ ըստ **Ձև 1 Կ** ձևաթղթի համապատասխան սյունակներում ընդամենը տողով պահանջվող տեղեկատվության:

7. Յուրաքանչյուր հրահանգչական տեղամասի կազմի գրառման ժամանակ լրացվում են մի քանի թերթեր, որոնք պետք է համարակալվեն ձևաթղթի ստորին աջ անկյունում, իսկ հասցեամասն անհրաժեշտ է լրացնել յուրաքանչյուր թերթի վրա:

8. **«Քաղաքների հաշվառման տեղամասի հրահանգչական տեղամասերի կազմը»՝ Ձև 2 Կ**, կազմվում է **Ձև 1 Կ**-ի հիման վրա:

9. Յուրաքանչյուր հրահանգչական տեղամասի վերաբերյալ տվյալները լրացվում են առանձին տողով: 1-ին սյունակում նշվում է հրահանգչական տեղամասի համարը, 2-րդ սյունակում՝ հրահանգիչ-հսկիչի ազգանունը, 3-րդ սյունակում նշվում է ցուցակագրման թաղամասի (զանգվածի) համարը **Ձև 1 Կ** ձևաթղթի 3-րդ սյունակից: 4-6-րդ սյունակներում համապատասխան տվյալները փոխանցվում են **Ձև 1 Կ** ձևաթղթից, հաշվարկվում և 7-րդ սյունակում լրացվում է միջին հաշվով մեկ հաշվային տեղամասի տնտեսությունների քանակը:

10. Բոլոր հրահանգչական տեղամասերի գրառումից հետո հաշվարկվում և ընդամենը տողով լրացվում է հաշվառման տեղամասի հանրագումարն ամբողջությամբ՝ ըստ ձևաթղթի համապատասխան սյունակների պահանջվող տեղեկատվության:

11. **«Քաղաքների հաշվառման շրջանացում»՝ Ձև 3 Կ**, լրացվում է հաշվառման տեղամասի համար՝ **Ձև 2 Կ** -ի հիման վրա: 1-ին սյունակում գրվում է հաշվառման տեղամասի համարը, 2-5-րդ սյունակներում փոխանցվում են **Ձև 2 Կ** տվյալները, իսկ 6-10-րդ սյունակների տվյալները հաշվարկվում են 2-5-րդ սյունակների համապատասխան տվյալների հիման վրա:

12. **«Գյուղերի հրահանգչական տեղամասի հաշվային տեղամասերի կազմը»՝ Ձև 4 Կ**, լրացվում է մարզի (տարածաշրջանի) գյուղերում ստեղծված հրահանգչական տեղամասի համար՝ նշելով դրա կազմի մեջ մտնող յուրաքանչյուր հաշվային տեղամասի տնտեսությունների վերաբերյալ տեղեկություններն առանձին տողերով:

13. Եթե գյուղական համայնքում իրականացվել են սխեմատիկ հատակագծով ցուցակագրման աշխատանքներ, ապա տեղեկությունները լրացվում են **համայնքներում տնտեսությունների ցուցակների (Ձև թիվ 1 Աղյուսակ 2-ի)** համապատասխան տվյալներից: Այս դեպքում աղյուսակի 3-րդ սյունակում նշվում է ցուցակագրման թաղամասի (զանգվածի) համարը:

14. Եթե տվյալ գյուղական համայնքում ցուցակագրման աշխատանքներ չեն իրականացվել, ապա ձևաթղթի լրացման համար հիմք է հանդիսանում **գյուղական համայնքներում բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող**

**այլ բնակատեղերի ու դրանցում տնտեսությունների ցուցակների (Ձև թիվ 2 - գյուղական)** տվյալները: Այս դեպքում աղյուսակի 3-րդ սյունակում նշվում է գյուղական համայնքի/բնակավայրի անվանումը:

15. Ընդ որում, եթե միևնույն հասցեում բնակվում են մեկից ավելի տնտեսություններ, ապա յուրաքանչյուր տնտեսության վերաբերյալ տվյալները գրվում են առանձին տողով, ինչպես լրացված է տնտեսությունների ցուցակներում:

16. **Ձև 4 Կ** ձևաթուղթը լրացվում է նույն սկզբունքով, ինչպես **Ձև 1 Կ** ձևաթուղթը:

17. **«Գյուղերի հաշվառման տեղամասի հրահանգչական և հաշվային տեղամասերի կազմը»՝ Ձև 5 Կ** լրացվում է **Ձև 4 Կ**-ի համապատասխան ամփոփ ցուցանիշների հիման վրա: Այն լրացվում է հաշվառման տեղամասում ներառված յուրաքանչյուր հրահանգչական տեղամասի համար:

18. **Ձև 5Կ-ի** 2-րդ սյունակում նշվում է գյուղական համայնքի/բնակավայրի անվանումը, հրահանգչական տեղամասի հասցեն, իսկ 3-րդ սյունակում՝ հրահանգիչ-հսկիչի ազգանունը:

19. Եթե հրահանգչական տեղամասի կազմում ներառված են մեկից ավելի գյուղական համայնքներ, ապա 4-րդ սյունակում նշվում է հրահանգչական տեղամասի կազմում ներառված գյուղական համայնքի/բնակավայրի պայմանական հերթական համարը: Եթե գյուղական համայնքի մի մասն է ներառված հրահանգչական տեղամասում, 4-րդ սյունակում ոչինչ չի գրվում, իսկ 5-րդ սյունակում կատարվում է (օրինակ՝ «Ազատավան գյուղի մի մասը») գրառումը:

Եթե հիմնական բնակավայրն իր ենթակայության տակ ունի այլ բնակատեղեր, ապա հաջորդ տողով գրվում է դրանց անվանումը:

20. 6-րդ սյունակում գրվում է տվյալ համայնքի և դրանում առկա այլ բնակատեղերի ընդամենը տնտեսությունների քանակը:

21. 7-րդ սյունակում առանձին տողերով նշվում է համայնքում/բնակավայրում կազմավորված յուրաքանչյուր հաշվային տեղամաս, իսկ 8-րդ սյունակում համայնքի ընդամենը տնտեսությունների ընդհանուր քանակից առանձնացվում և գրվում է տվյալ հաշվային տեղամասում ներառված տնտեսությունների քանակը:

22. Եթե գյուղը բաժանված է տարբեր հրահանգչական տեղամասերի միջև, ապա տվյալ գյուղի վերաբերյալ ըստ Ձև 5Կ ձևաթղթով պահանջվող տեղեկատվության լրացումից հետո, անհրաժեշտ է առանձին տողով ամփոփել **ընդամենը գյուղի վերաբերյալ համապատասխան** սյունակներում պահանջվող տեղեկատվությունը:

23. Վերջին հրահանգչական տեղամասի գրառումից հետո հաշվարկվում է և նշվում է ընդամենը հաշվառման տեղամասի հանրագումարը:

24. «**Գյուղերի հաշվառման շրջանացում**»՝ **Ձև 6 Կ**, լրացվում է **Ձև 5 Կ** ձևաթղթի հիման վրա՝ ըստ յուրաքանչյուր հաշվառման տեղամասի:

25. «**Միասնական (քաղաքների և գյուղերի) հրահանգչական տեղամասի հաշվային տեղամասերի կազմը**»՝ **Ձև 7 Կ**, լրացվում է միայն այն հրահանգչական տեղամասի համար, որը ձևավորվել է քաղաքների և գյուղերի հաշվային տեղամասերից: Նման դեպքում քաղաքներում ձևավորված հաշվային տեղամասի կազմի մեջ մտնող տնտեսությունների վերաբերյալ տվյալները լրացվում են **Ձև 1 Կ** ձևաթղթով, իսկ գյուղերի տնտեսությունների վերաբերյալ տեղեկությունները՝ **Ձև 4 Կ** ձևաթղթով: Հրահանգչական տեղամասի կազմի վերաբերյալ տեղեկությունները լրացվում են ըստ **Ձև 7 Կ** ձևաթղթի համապատասխան սյունակներում պահանջվող տեղեկատվության: Եթե հրահանգչական տեղամասում համայնքը (քաղաքը կամ գյուղը) ներառված է ոչ ամբողջությամբ, ապա 2-րդ և 7-րդ սյունակներում կատարվում է (օրինակ՝ «Ազատավան գյուղի մի մասը») գրառումը: Մնացած սյունակները լրացվում են ըստ պահանջվող տեղեկատվության:

26. «**Միասնական (քաղաքների և գյուղերի) հաշվառման տեղամասի հրահանգչական և հաշվային տեղամասերի կազմը**»՝ **Ձև 8 Կ**, լրացվում է միայն այն հաշվառման տեղամասերի համար, որը ձևավորվել է քաղաքների և գյուղերի, ինչպես նաև միասնական հրահանգչական տեղամասերից: Քաղաքներում ձևավորված հրահանգչական տեղամասի կազմի մեջ մտնող տնտեսությունների վերաբերյալ տվյալները լրացվում են **Ձև 2 Կ** ձևաթղթով, իսկ գյուղերի տնտեսությունների վերաբերյալ տեղեկությունները՝ **Ձև 5 Կ** ձևաթղթով: Հաշվառման տեղամասի կազմի վերաբերյալ տեղեկությունները լրացվում են ըստ **Ձև 8 Կ** ձևաթղթի համապատասխան սյունակներում պահանջվող տեղեկատվության:

27. Եթե հաշվառման տեղամասում համայնքը (քաղաքը կամ գյուղը) ներառված է ոչ ամբողջությամբ, ապա 4-րդ և 9-րդ սյունակներում կատարվում է (օրինակ՝ «Ազատավան գյուղի մի մասը») գրառումը: Մնացած սյունակները լրացվում են ըստ պահանջվող տեղեկատվության:

28. Եթե մեկ տարածաշրջանում առկա են մեկից ավել միասնական հաշվառման տեղամասեր, ապա դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է առանձին տողով, իսկ վերջում հաշվարկվում հանրագումարն ամբողջությամբ տարածաշրջանի կտրվածքով:

29. «Ցուցակ **խմբային տնտեսությունների (քրեակատարողական հիմնարկներ, զորամասեր, մանկատներ, ծերերի և հաշմանդամների**

սոցիալական սպասարկման կազմակերպություններ, ուսումնական հաստատություններ, գիտա-փորձարարական ստորաբաժանումների) և **առևտրային կազմակերպությունների»՝ Զև 9 Կ**, ձևաթղթում այդպիսի կազմակերպությունների գրառումը կատարվում է սկզբում ըստ քաղաքների, իսկ այնուհետև՝ ըստ գյուղերի: Այն լրացվում է ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային ստորաբաժանման պատասխանատու անձի կողմից: Աղյուսակի 5-րդ՝ «Գրառումներ», սյունակում նշվում է տվյալ կազմակերպության կողմից փորձնական ԳՀՀ համապատասխան հարցաթերթի լրացման և ՀՀ ԱՎԾ տրամադրման մասին տեղեկատվությունը: Կազմակերպությունների կողմից հարցաթերթի լրացման ապահովումը կատարվում է ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններում ԳՀՀ աշխատանքները համակարգողների կողմից՝ այն է սահմանված ժամկետում նրանց հարցաթերթի տրամադրում, հարցաթերթի լրացման ժամանակ, անհրաժեշտության դեպքում, մեթոդաբանական օժանդակության ցուցաբերում, հարցաթերթի ստուգում և սահմանված ժամկետում լրացված հարցաթերթի ընդունում և հանձնում:

30. «**Հաշվառման կադրերի պահանջարկ**»՝ **Զև 10 Կ**, ձևաթուղթը լրացվում է կազմալանի **Զև 3 Կ, Զև 6 Կ և Զև 8 Կ** ձևաթղթերի հիման վրա: Սկզբում լրացվում են քաղաքների, այնուհետև գյուղական վայրերի վերաբերյալ տեղեկությունները: Յուրաքանչյուր հաշվառման տեղամասի վերաբերյալ տվյալները լրացվում են առանձին տողով:

31. «**Տեղեկանք՝ հաշվառման կադրերի (ներառյալ ռեզերվը՝ պահուստը) ուսուցման (հրահանգավորման)**»՝ **Զև 11 Կ** ձևաթղթում լրացվում է տեղեկություններ հաշվառման կադրերի ուսուցման վերաբերյալ: Գրառումները կատարվում են ըստ յուրաքանչյուր հրահանգավորման խմբի: Հրահանգավորվող կադրերի ընդհանուր թվաքանակն ըստ առանձին խմբերի պետք է համապատասխանի **Զև 10 Կ** ձևաթղթի 3-րդ, 4-րդ, 7-րդ և 10-րդ սյունակներում գրառված համապատասխան ցուցանիշներին:

32. «**Տեղեկանք՝ բնակչության շրջանում զանգվածային բացատրական աշխատանքների կազմակերպման**»՝ **Զև 12 Կ-ի**, 2-րդ սյունակում լրացվում է փորձնական ԳՀՀ անցկացման նպատակի, խնդիրների, կարգի և ժամկետների մասին բնակչության և գործարարության շրջանում կատարվելիք բացատրական աշխատանքի բովանդակությունը, իսկ հաջորդ սյունակներում նշվում է դրա կատարման ժամկետի և այդ աշխատանքներն իրականացնողների մասին:

33. **Կազմալանի** բոլոր ձևաթղթերը, բացառությամբ **Զև 1 Կ-ից և Զև 4 Կ-ից**, լրացվում են երկու օրինակից: **Կազմալանի** լրացված ձևերը պետք է համեմատվեն գյուղական համայնքների ցուցակների, տնտեսությունների ցուցակների, առկայության դեպքում՝ քարտեզագրական նյութերի հետ:



**Կազմալանի** ձևաթղթերում լրացված տվյալները պետք է փոխկապակցված լինեն իրար հետ:

34. **Կազմալանի** երկու օրինակները քարտեզագրական նյութերի հետ միասին, ներկայացվում են ՀՀ ԱՎԾ՝ հաստատման: **Կազմալանի** հաստատումից հետո հաստատված մեկ օրինակը **Ձև 1 Կ և Ձև 4 Կ** ձևաթղթերի սխեմատիկ հատակագծերի հետ վերադարձվում են ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալություններ:

**Քաղաքների հրահանգչական տեղամասի հաշվային տեղամասերի կազմը**

Մարզ-----Տարածաշրջան-----Քաղաք-----Հաշվառման տեղամաս N -----

Հրահանգչական տեղամաս N -----Հրահանգիչ-հսկիչ----- Հրահանգչական տեղամասի հասցեն-----

(ազգանուն, անուն)

-----Հրահանգչական տեղամասի սահմանների նկարագրությունը-----

Հաշվային տեղամասի համարը	Հաշվարարի ազգանունը (գրվում է հաստատվելուց հետո)	Ցուցակագրման թաղամասի (զանգվածի) համարը	Փողոցի, նրբանցքի, անցուղու և այլնի անվանումը	Տան համարը	Տնտեսության գլխավորի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը	Տնտեսությունում առկայությունը		
						գյուղատնտեսական նշանակության և/կամ տնամերձ հողերի	գյուղատնտեսական կենդանիների	գյուղատնտեսական տեխնիկայի
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>X</b>	<b>X</b>					

**Քաղաքների հաշվառման տեղամասի հրահանգչական տեղամասերի կազմը**

Մարզ-----Տարածաշրջան-----Քաղաք-----Հաշվառման տեղամաս N-----

Հաշվառման տեղամասի վարիչ-----Հաշվառման տեղամասի հասցեն-----

(ազգանուն, անուն)

-----Հաշվառման տեղամասի սահմանների նկարագրությունը-----

Հրահանգչական տեղամասի համարը	Հրահանգիչ-հսկիչի ազգանունը (գրվում է հաստատագրված հետո)	Հրահանգչական տեղամասի մեջ մտնող թաղամասերի (զանգվածների) համարները: Եթե թաղամասը մտնում է ոչ ամբողջությամբ, նշել փողոցների անվանումները և տների համարները	Հրահանգչական տեղամասի կազմում ընդգրկված են			Միջին հաշվով մեկ հաշվային տեղամասի տնտեսությունների քանակը (սյունակ 6 : սյունակ 4)
			հաշվային տեղամասեր (հատ)	տներ (հատ)	տնտեսություններ (հատ)	
1.	2.	3.	4.	5.	6.	7.
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>X</b>				<b>X</b>



**Գյուղերի հրահանգչական տեղամասի հաշվային տեղամասերի կազմը**

Մարզ-----Տարածաշրջան-----Հաշվառման տեղամաս N ----- Հրահանգչական տեղամաս N -----

Հրահանգիչ-հսկիչ----- Հրահանգչական տեղամասի հասցեն-----

(ազգանուն, անուն)

Հրահանգչական տեղամասի սահմանների նկարագրությունը-----

Հաշվային տեղամասի համարը	Հաշվարարի ազգանունը (գրվում է հաստատելուց հետո)	Ցուցակագրման թաղամասի (գանգվածի) համարը, գյուղական համայնքի/ բնակավայրի անվանումը	Փողոցի, նրբանցքի, անցուղու և այլնի անվանումը	Տան համարը	Տնտեսության գլխավորի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը	Տնտեսությունում առկայությունը		
						գյուղատնտեսական նշանակության և/կամ տնամերձ հողերի	գյուղատնտեսական կենդանիների	գյուղատնտեսական տեխնիկայի
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
ԸՆԴԱՍԵՆԸ		X	X					

**Գյուղերի հաշվառման տեղամասի, հրահանգչական և հաշվային տեղամասերի կազմը**

Մարզ ----- Տարածաշրջան-----Համայնքներ-----

Հաշվառման տեղամաս N -----Հաշվառման տեղամասի վարիչ-----Հաշվառման տեղամասի հասցեն-----  
(ազգանուն, անուն)

Հրահանգչական տեղամասի համարը	Գյուղական համայնքի/բնակավայրի անվանումը, հրահանգչական տեղամասի հասցեն	Հրահանգիչ-հսկիչի ազգանունը (գրվում է հաստատվելուց հետո)	Գյուղական համայնքի/բնակավայրի հերթական համարը	Գյուղական համայնքի/բնակավայրի անվանումը	Տնտեսությունների քանակը համայնքում/բնակավայրում	Հաշվային տեղամասի համարը	Տնտեսությունների քանակը հաշվային տեղամասում
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.
ԸՆԴԱՄԵՆԸ		X		X			

### Գյուղերի հաշվառման շրջանացում

Մարզ-----Տարածաշրջան-----

Հաշվառման տեղամասի համարը	Հաշվառման տեղամասում			Կազմավորված տեղամասերի քանակը (հազ)		Միջին հաշվով մեկ հրահանգչական տեղամասում		Միջին հաշվով մեկ հաշվային տեղամասի տնտեսությունների քանակը (սյունակ 4 : սյունակ 6)
	գյուղական համայնքների քանակը (հազ)	գյուղական բնակավայրերի քանակը (հազ)	տնտեսությունների քանակը (հազ)	հրահանգչական	հաշվային	տնտեսություններ (սյունակ 4 : սյունակ 5)	հաշվային տեղամասեր (սյունակ 6 : սյունակ 5)	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>						<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>

**Միասնական (քաղաքների և գյուղերի) հրահանգչական տեղամասի հաշվային տեղամասերի կազմը**

Մարզ-----Տարածաշրջան----- Հաշվառման տեղամաս N -----

Հրահանգչական տեղամաս N ----- Հրահանգիչ-հսկիչ----- Հրահանգչական տեղամասի հասցեն-----  
(ազգանուն, անուն)  
-----Հրահանգչական տեղամասի սահմանների նկարագրությունը-----

Հրահանգչական տեղամասի համարը	Հրահանգչական տեղամասի կազմի մեջ ներառված քաղաքային					Հրահանգչական տեղամասի կազմի մեջ ներառված գյուղական				
	համայնքի անվանումը	դրանում			Միջին հաշվով մեկ հաշվային տեղամասում տնտեսությունների քանակը (սյունակ 5: սյունակ 3)	համայնքի անվանումը	դրանում			Միջին հաշվով մեկ հաշվային տեղամասում տնտեսությունների քանակը (սյունակ 10: սյունակ 8)
		հաշվային տեղամասերի		տնտեսությունների քանակը (հափ)			հաշվային տեղամասերի		տնտեսությունների քանակը (հափ)	
		քանակը (հափ)	համարները				քանակը (հափ)	համարները		
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
ԸՆԴԱՄԵՆԸ	X		X		X	X		X		X



**Միասնական (քաղաքների և գյուղերի) հաշվառման տեղամասի  
հրահանգչական և հաշվային տեղամասերի կազմը**

Մարզ-----Տարածաշրջան----- Հաշվառման տեղամաս N -----

Հաշվառման տեղամասի վարիչ----- Հաշվառման տեղամասի հասցեն-----

*(ազգանուն, անուն)*

Հաշվառման տեղամասի համարը	Կազմավորված տեղամասերի քանակը (հափ)		Հաշվառման տեղամասի կազմի մեջ ներառված քաղաքային					Հաշվառման տեղամասի կազմի մեջ ներառված գյուղական					
	հրահանգչական	հաշվային	Համայնքի անվանումը	դրանում				Համայնքի անվանումը	դրանում				
				հրահանգչական տեղամասերի		հաշվային տեղամասերի			հրահանգչական տեղամասերի		հաշվային տեղամասերի		
				քանակը (հափ)	համարները	քանակը (հափ)	համարները		քանակը (հափ)	համարները	քանակը (հափ)	համարները	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	12.	13.	
ԸՆԴԱՄԵՆԸ			X		X		X		X		X		X

**Ց ՈՒ Ց Ա Կ**

**Խմբային տնտեսությունների**

(քրեակադարողական հիմնարկներ, զորամասեր, մանկապարտեզներ,  
ծերերի և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ,  
ուսումնական հաստատություններ, գիտա-փորձարարական ստորաբաժանումներ)

**և առևտրային կազմակերպությունների**

Մարզ-----Տարածաշրջան-----

Հ/Հ	Կազմակերպության / հիմնարկի անվանումը	Տնտեսական գործունեության տեսակը	Գործունեության իրականացման հասցեն	Գրառումներ
1.	2.	3.	4.	5.

### Հաշվառման կադրերի պահանջարկ

Մարզ-----Տարածաշրջան-----

Հաշվառման տեղամասի		Հաշվառման տեղամասի վարիչ (մարդ)	Հաշվառման տեղամասի վարիչի օգնական (մարդ)	Հրահանգիչ-հսկիչներից			Հաշվարարներից			Ընդամենը անհրաժեշտ են հաշվառման կադրեր (սյունակ 3+ սյունակ 4 + սյունակ 7+ սյունակ 10)
Համարը	Անվանումը			հիմնական քանակը (մարդ)	ոեզերվը (մարդ)	ընդամենը (մարդ)	հիմնական քանակը (մարդ)	ոեզերվը (մարդ)	ընդամենը (մարդ)	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
ԸՆԴԱՄԵՆԸ										

**ՏԵՂԵԿԱՆՔ**  
**հաշվառման կադրերի ուսուցման (հրահանգավորման)**

Մարզ-----Տարածաշրջան-----

Հ/Հ	Հրահանգավորվողներ (հաշվառման տեղամասի վարիչներ, հաշվառման տեղամասի վարիչների օգնականներ, հրահանգիչ-հսկիչներ, հաշվարարներ)	Մասնակիցների քանակը	Հրահանգավորման ժամկետը	Հրահանգավորումն անցկացնելու վայրը	Ով է անցկացնում հրահանգավորումը
1.	2.	3.	4.	5.	6.
ԸՆԴԱ- ՄԵՆԸ	Հաշվառման տեղամասի վարիչներ		X	X	X
	Հաշվառման տեղամասի վարիչների օգնականներ				
	Հրահանգիչ-հսկիչներ				
	Հաշվարարներ				







**Քաղաքների հաշվառման տեղամասի հրահանգչական տեղամասերի կազմը**

Մարզ-----Տարածաշրջան-----Քաղաք -----Հաշվառման տեղամաս N -----

Հաշվառման տեղամասի վարիչ-----Հաշվառման տեղամասի հասցեն-----

(ազգանուն, անուն)

-----Հաշվառման տեղամասի սահմանների նկարագրությունը-----

Հրահանգչական տեղամասի համարը	Հրահանգիչ-հսկիչի ազգանունը (գրվում է հաստատվելուց հետո)	Հրահանգչական տեղամասի մեջ մտնող թաղամասերի (զանգվածների) համարները: Եթե թաղամասը մտնում է ոչ ամբողջությամբ, նշել փողոցների անվանումները և տների համարները	Հրահանգչական տեղամասի կազմում ընդգրկված են			Միջին հաշվով մեկ հաշվային տեղամասի տնտեսությունների քանակը (սյունակ 6 : սյունակ 4)
			հաշվային տեղամասեր (հատ)	տներ (հատ)	տնտեսություններ (հատ)	
1.	2.	3.	4.	5.	6.	7.
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>X</b>				<b>X</b>









**Գյուղերի հաշվառման տեղամասի, հրահանգչական և հաշվային տեղամասերի կազմը**

Մարզ ----- Տարածաշրջան ----- Համայնքներ -----

Հաշվառման տեղամաս N ----- Հաշվառման տեղամասի վարիչ ----- Հաշվառման տեղամասի հասցեն -----  
(ազգանուն, անուն)

Հրահանգչական տեղամասի համարը	Գյուղական համայնքի/բնակավայրի անվանումը, հրահանգչական տեղամասի հասցեն	Հրահանգիչ-հսկիչի ազգանունը (գրվում է հաստատագրված հետքով)	Գյուղական համայնքի/բնակավայրի հերթական համարը	Գյուղական համայնքի/բնակավայրի անվանումը	Տնտեսությունների քանակը համայնքում/բնակավայրում	Հաշվային տեղամասի համարը	Տնտեսությունների քանակը հաշվային տեղամասում
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.
ԸՆԴԱՄԵՆԸ		X		X			



## Միասնական (քաղաքների և գյուղերի) հրահանգչական տեղամասի հաշվային տեղամասերի կազմը

Մարզ-----Տարածաշրջան----- Հաշվառման տեղամաս N -----

Հրահանգչական տեղամաս N ----- Հրահանգիչ-հսկիչ----- Հրահանգչական տեղամասի հասցեն-----

(ազգանուն, անուն)

-----Հրահանգչական տեղամասի սահմանների նկարագրությունը-----

Հրահանգչական տեղամասի համարը	Հրահանգչական տեղամասի կազմի մեջ ներառված քաղաքային					Հրահանգչական տեղամասի կազմի մեջ ներառված գյուղական				
	համայնքի անվանումը	դրանում			Միջին հաշվով մեկ հաշվային տեղամասում տնտեսությունների քանակը (սյունակ 5: սյունակ 3)	համայնքի անվանումը	դրանում			Միջին հաշվով մեկ հաշվային տեղամասում տնտեսությունների քանակը (սյունակ 10: սյունակ 8)
		հաշվային տեղամասերի		տնտեսությունների քանակը (հատ)			հաշվային տեղամասերի		տնտեսությունների քանակը (հատ)	
		քանակը (հատ)	համարները				քանակը (հատ)	համարները		
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
ԸՆԴԱՄԵՆԸ	X		X		X	X		X		X









**ՏԵՂԵԿԱՆՔ**  
**հաշվառման կադրերի ուսուցման (հրահանգավորման)**

Մարզ-----Տարածաշրջան-----

Հ/Հ	Հրահանգավորվողներ (հաշվառման տեղամասի վարիչներ, հաշվառման տեղամասի վարիչների օգնականներ, հրահանգիչ-հսկիչներ, հաշվարարներ)	Մասնակիցների քանակը	Հրահանգավորման ժամկետը	Հրահանգավորումն անցկացնելու վայրը	Ով է անցկացնում հրահանգավորումը
1.	2.	3.	4.	5.	6.
ԸՆԴԱ- ՄԵՆԸ	Հաշվառման տեղամասի վարիչներ		X	X	X
	Հաշվառման տեղամասի վարիչների օգնականներ				
	Հրահանգիչ-հսկիչներ				
	Հաշվարարներ				

